ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀԽԳՀ-ԲՄԾՁԲ-18/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «24» հոկտեմբերի 2018թ.

2018թ-ի հոկտեմբերի 23-24ը Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 39Ա հասցեում, տեղի ունեցավ ՀԽԳՀ-ԲՄԾՁԲ-18/2 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Ֆրունզիկ	Հարությունյան	Գնահատող հանձնաժողովի նախագահ.
Արամայիս	Մկրտչյանը	Գնահատող հանձնաժողովի գնահատող անդամ.

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

Անի	Բազեյանը	Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի գնումների մասնագետ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի երկու անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ֆրունզիկ Հարությունյանը, իսկ քարտուղարն էր՝ Անի Բազեյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԽԳՀ-ԲՄԾՁԲ-18/2 ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու հայտ ներկայացրած անձի, վերջինիս կողմից ներկայացված հայտի գնահատման և առաջարկված գնի մասին:
2. Առաջին տեղ զբաղեցրած մասնակից որոշելու մասին:
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

1. ՀԽԳՀ-ԲՄԾՁԲ-18/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԻ, ՎԵՐՋԻՆԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Ֆրունզիկ Հարությունյանը նշեց, որ գնման առարկայի 1-ին չափաբաժնի ընդհանուր (նախահաշվային) գինը կազմում 8 000 000 ՀՀ դրամ:

Հայտերի բացումը տեղի է ունեցել 2018 թվականի հոկտեմբերի 23-ին, ժամը՝ 11:00-ին:

Մրցույթի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն իրականացվել:

Հանձնաժողովի քարտուղար Անի Բազեյանը հայտնեց, որ՝

• ՀԽԳՀ-ԲՄԾՁԲ-18/2 ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու հայտ է ներկայացրել հետևյալ անձը (այսուհետ՝ նաև մասնակիցը).

Հ/հ	Մասնակցի անվանում	Մասնակցի գտնվելու վայրը
1.	Ռայներ Ռութթիգեր	ՀՀ, ք. Երևան, Այգեստան 11, տուն 227

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

• Մասնակիցը հայտը պարունակող ծրարը կազմել և ներկայացրել է ՀԽԳՀ-ԲՄԾՁԲ-18/2 ծածկագրով բաց մրցույթի (այսուհետ՝ ընթացակարգ) հրավերի (այսուհետ՝ հրավեր) պահանջներին համապատասխան.

• Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.

• Մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին.

• Մասնակիցը ներկայացրել է հետևյալ գինը.

Չափա-բաժնի համարը	Ծառայության անվանումը	Մասնակցի անվանումը և առաջարկած գինը՝ (ՀՀ դրամ)		
		Ռայներ Ռութթիգեր		
		Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1.	Արտադրության կառավարման խորհրդատվական ծառայություններ	8 000 000	-	8 000 000

Որոշվեց՝

1. Ֆրունզիկ Հարությունյանի և Անի Բազեյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. Մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Դեմ՝ 0

2. ԱՌԱՋԻՆ ՏԵՂ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել Ռայներ Ռութթիգերին:

Կողմ՝ 2
Դեմ՝ 0

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐՎԱ ԵՎ ԺԱՄԻ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

Հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 43-րդ կետով սահմանված փաստաթղթերը հանձնաժողովի քարտուղարի կողմից հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին:

Կողմ՝ 2
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ֆ. Հարությունյան _____

Հանձնաժողովի անդամ՝

Ա. Մկրտչյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Բազեյան _____